

Մամուլի հաղորդագրություն

9. 04. 2019 թ.

Կայացավ ՔՈԱՖ-ի առաջին գազաթնաժողովը

«Նորարարության միջոցով զարգացնել գյուղական համայնքները՝ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ նախաձեռնություններով երեխաներին ու չափահասներին անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելով»։ սա «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) լրամշակված ու վերաձևակերպված առաքելությունն է:

Ապրիլի 4-6-ը Լոռու մարզի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում կայացավ հիմնադրամի առաջին գազաթնաժողովը, որին մասնակցում էին հոգաբարձուների խորհրդի անդամները, ՔՈԱՖ-ի ղեկավար կազմն ու տարբեր ոլորտների մասնագետներ մի շարք երկրներից՝ Թաիլանդ, ԱՄՆ, Մալթա, Վենեսուելա:

Ուզանավարության մշակման ընթացքում ՔՈԱՖ-ի հիմնադիր դոկտոր **Կարո Արմենն** առանձնացրեց գործունեության երկու հիմնական սկզբունք՝ նորարարություն և արագություն: «Մեր տեսլականի հիմքում նորարարությունն է՝ որպես խնդիրների լուծման կենսական, արդի մոտեցում, իսկ իրավիճակին արագ արձագանքը մերօրյա անհավանական տեմպով զարգացող աշխարհում դառնում է անհրաժեշտություն»:

ՔՈԱՖ-ի գազաթնաժողովը հարթակ էր՝ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի զարգացման ուղիները քննարկելու և որոշումներ կայացնելու: Վերամշակելով ՔՈԱՖ-ի տեսլականն ու առաքելությունը՝ մասնակիցները գյուղական համայնքների զարգացման և առաջընթացի հավակնոտ ձգտումներ ու գործողություններ նախանշեցին:

Գազաթնաժողովի մասնակիցները համակարծք էին, որ Հայաստանի տնտեսության զարգացման համար շատ կարևոր է, որ յուրաքանչյուր քաղաքացի գործնականում մասնակցի տնտեսության կառուցմանն ու աճին: Այս համատեքստում գործազուրկ կամ երկրից դուրս աշխատանքային հնարավորություններ փնտրող բնակիչներին, ըստ Կարո Արմենի, պետք է ցույց տալ հնարավորությունների լայն շրջանակ իրենց իսկ համայնքում, զինել նոր գիտելիքով ու հմտություններով, ստեղծել նախադրյալներ, որ մարդը կարողանա աշխատել, արարել ու արժեք ստեղծել:

* * *

[Հայաստանի մանուկներ հիմնադրամը \(COAF\)](#) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող

Ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների քավելի քան 75,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսակական՝ [ՍՄԱՐԹ նախաձեռնություն](#): ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսին՝ ծառայելու մարզի շուրջ 150 հազար բնակիչներին: